Հավելված N1

ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի

մայիսի 25-ի N 247-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է <ՀրազՋԷԿ> ԲԲԸ <Գնումների գնահատող հանձնաժողովի >-ի
2017 թվականի «06» «22» «N07/22.06.17» արձանագրությամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն

Գնանշման հարցման ծածկագիրը՝ ՀՋ-ԳՀ-ԱՊՁ/Վ-22-06-ԱՄ

Պատվիրատուն՝ <ՀրազՋԷԿ> ԲԲԸ , որը գտնվում է ք.Հրազդան, Գործարանային-1 հասցեում, հայտարարում է գնանշման հարցում, որն իրականացվում է մեկ փուլով:

Գնանշման հարցման ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել Պրեմիում բենզին չեկերով՝ 2000լ, Ռեգուլյար բենզին՝ 4205լ, Դիզելային վառելիք՝ 4205լ մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի սույն գնանշման հարցմանը մասնակցելու հավասար իրավունք:

Գնանշման հարցմանը մասնակցելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշներն ու այդ չափանիշների գնահատման համար ներկայացվելիք փաստաթղթերը սահմանված են սույն ընթացակարգի հրավերով:

Ընտրված մասնակիցը որոշվում է հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Գնանշման հարցման հրավերը թղթային ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված՝4-րդ օրը ժամը 15^{00}-ը: Ընդ որում, թղթային ձևով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է թղթային ձևով հրավերի տրամադրումն անվճար (կամ____ ՀՀ դրամը, որը չի կարող գերազանցել հրավերի պատճենահանման և առաքման համար կատարվող ծախսերի չափը, վճարված լինելը հավաստող՝ բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը դիմումի հետ միասին ներկայացնելու դեպքում[1]) այդպիսի պահանջ ստանալուն հաջորդող առաջին աշխատանքային օրը: (Վճարումն անհրաժեշտ է իրականացնել---------- հաշվեհամարին[2]):

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն անվճար ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Գնանշման հարցման հայտերն անհրաժեշտ է ներկայացնել <ՀրազՋԷԿ>ԲԲԸ, ք. Հրազդան, Գործարանային-1 հասցեով,

(պատվիրատուի հասցեն)

---

[1] *Փակագծերում նշված արտահայտությունը հանվում է, եթե հրավերի տրամադրման համար վճար չի նախատեսվում, հակառակ դեպքում՝ նախադասությունից հանվում է «անվճար» բառը:*

[2] *Փակագծերում նշված նախադասությունը հանվում է, եթե հրավերի տրամադրման համար վճար չի նախատեսվում:*

փաստաթղթային ձևով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 4-րդ օրվա ժամը15^{00}-ը: Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

Հայտերի բացումը տեղի կունենա <ՀրազՋԷԿ>ԲԲԸ, ք. Հրազդան, Գործարանային-1 հասցեում, 2017թ «հուլիսի» «06» -ին ժամը __15 ^{00}___-ին:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքները պետք է ներկայացնել Գնումների բողոքարկման խորհուրդ՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան փող. 1 հասցեով: Բողոքարկումն իրականացվում է սույն գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով: Բողոքը ներկայացնելու համար պահանջվում է վճար՝ 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամի չափով, որը պետք է փոխանցվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության անվամբ բացված «900008000482» գանձապետական հաշվեհամարին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար `Սոֆյա Մարգարյանին

Հեռախոս +374 99080896
Էլ. Փոստ hhayrapetyan@raztes.am

Պատվիրատու <Հրազդանի Էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ) > ԲԲԸ